


ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ  
Ե. ՓԱՐՈՍՅԱՆ

ՆԱԽԱԿ ՊԱՐ ՈՐ ԵՒ Ե ԳՐԱԳՐՈՒՄ  
ՊԵՏՐ Ե ՈՂՁ, ԱՌ  
ՏՏՈՐԻՆ: ԱՐՇԱԼՈՅՍ ԳՐԱԳՐԻ  
ԳԱԶԻՐԷ (ՓՈՒՐ ԱԷՐԱՆԵՐ)

E. TOROSSIAN  
Direct. propr. du journal arménien  
ARCHALOUICE  
LE CAIRE (Égypte)

Poste-restante



ԼՐԱՅԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՔԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ՔԱՐՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկան: զոյգ դասեր	60
Վեցամսեայ »	35
Տարեկան: միակ դաս	20
Վեցամսեայ »	12

ՔԱՐՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՆԿԵԿ Ե  
ԵՒ ԹՎՈՍԱՅԻ ԾԱՌՔԸ  
ԽՈՒՔԱՐՈՒՔԵԱՆՈՒ ՎՐԱՅ:  
ԽՈՒՔԱՐՈՒՔԵԱՆՈՒ ՈՂՁՈՒԱԾ  
ԳՐԱՔՐՈՒՄ ԵՒ ԶԵՆՈՒՐ:

ԱԶԳԱՅԻՆՈՒԹԻՒՆԸ  
Կանխիկ վճարելու են

ՕՐՈՒԱՆ ՀԱՐՑԵՐ

Բ.

ԿՐԻՍՏՈՒԹՅԱՆ ԿՐԻՍՏՈՒԹՅԱՆ

ՀԱՆԵՂՁ ԱՍՏՈՒՍՏՅԱՆ ՕՐԲՈՒՑ

Ինչպէս տեսանք (1) կուսակրօնութիւնը Աստուածային պատուէր մը է. ինչ որ Պապին ալ կը խոստովանի իր շրջաբերականին մէջ. Հետաքրքրական է ուրեմն գիտնալ թէ՛ ո՞րպիսի պարագայերու բերմամբ եւ ի՞նչ նպատակաւ այսպիսի կարգադրութիւն մը եղած է անցեալին մէջ «Պապերը եւ ժողովներու միջոցաւ» եկեղեցւոյ պաշտօնէն նկատմամբ:

Յայտնի է որ երբ քրիստոնէութիւնը ծնունդ կ'առնէր, կուսակրօնութիւնը դարեւ ի վեր կազմակերպուած պաշտօնական եւ հանրային կրօնքն էր երկրիս. իր սուրբութիւններով, արագութիւններով, շատուածներով եւ շատուածներով գիւղացիներով կամ կէս-շատուածներով եւ այլն, եւ այլն: Հաշտելի չինք անքան Սուրբ-ասկանութիւնը, որուն փոքրամիտ ժողովուրդ մը միայն կը հետեւէր Հրէաստանի մէջ, եւ որ շրջակայ ազգերէն առնուած սովորութիւններով եւ զուսուսութիւններով իր իսկութիւնը շատոնց կորսնցուցած էր:

Մենքի՛ ընկալմամբ՝ առաջին դարերուն քրիստոնէականները իրենց մեծ դժուարութեանց առջեւ կը դանդաղէին իրենց յանձնուած գործը կատարելու. նոր կրօնքը քարոզելու. համար, եւ այնպէս կ'երեւէր թէ հազարաւոր նահատակներու արիւնը պարզապէս պիտի մնար: Հետեւաբար թէ՛ իրենց պաշտօնը գիւղացիներու, եւ թէ՛ կուսակրօնները իրենց յանկուցանելու համար գիւղացիին փոխադարձ զիջողութեանց գրուածն էր. քրիստոնէական ճշմարտութիւնները փոխանակելով հիթանոսական սովորութեանց հետ, որոնց մէջ էին եւ նաեւ կրօնական հարկադրեալ ամուրիութիւն եւ մենակեցութիւն:

Կը տեսնենք յարեմն որ այդ փոխադրութեանց շարժառիթը ոչ ալ ինչ էր, բայց միայն Աստուծոյ գործը յառաջ տանելու բարի նպատակաւ միջավայրի պահանջմանց ձգտումով:

Շատ լաւ է բայց երբ Երբայեցիք՝ Յեզեկն անաշնորդութեամբ Աւետեաց կրկիւր մտնելու վրայ էին, Աստուած յատկապէս անոնց պատուիրեց «Հեթանոսներու հետ չ'խառնուել եւ անոնց աստուածներն ու սովորութիւնները չ'ընդունիլ»: Եւ Քրիստոսը իր աշակերտներուն ըսած էր. «Գնացէ՛ք քարոզեցէ՛ք... եւ ուր որ ձեզի չ'լսեն, ոտքերնուդ փոշին թօթափեցէ՛ք եւ հեռացէ՛ք»: Այս երկու պատուէրներուն մէջ զիջումի կամ փոխանակութեան հետք չ'կայ: Փալով Աստուծոյ գործին մէջ բարի նպատակին, դարձեալ կը կարգանք որ պատագոյն է հնազանդութիւն քան զուսուսութիւն: «Ձեզի ըսուած խօսքերէն յաջ կամ յանկալ մի կոտորիք»:

Սակայն կ'երեւայ թէ Արեւելեան — Հայկա-

(1) Տե՛ս «Արշալոյս» թիւ 54:

կան եւ Յունական — եկեղեցիք բոլորովին համոզուած չ'էին կուսակրօնութեան մասին «Պապերու եւ ժողովներու միջոցաւ» սրուած վճռոյն ճշդութեան. զայս կ'ապացուցանէ ամուսնացեալ կրօնաւորաց — սերտերներու — գոյութիւնը մշտեալ երկու եկեղեցիներու մէջ:

Հոս ալ նկատուելու կէտեր կան, բայց անցնինք եւ հարցնենք թէ քանի որ՝ քրիստոնէութեան ընդհանրանալով՝ պարտաւորեալ կուսակրօնութեան հարկ չ'մնաց, միթէ խոհեմութիւն չ'է հետեւիլ այլեւս այն ուղղութեան, զոր Արարիչը մատնանիլ կ'ընէ, այնքան դարեր մեր կարծեցեալ բարի նպատակին ծառայելէ ետքը:

Այս մասին ալ դադար մը կազմելու համար՝ քանի որ տեղեկատու ուրիշ աղբիւր չ'ունինք մեր սրբազրութեան տակ՝ դարձեալ գիտնինք Պապական շրջաբերականին, ո՛ւր կը կարգանք. «Բայց ասկա (Հարաւ-Ամերիկայի կղերին ամուսնութիւնը) լոկ թոյլտուութիւն մ'է (tolerance) եւ Պապը դարձեալ կը հրահրէ զիրենք ճշմարտեմար համարելու կատարելութեան (perfection) շախիզ, եւ որչափ հնար է ամուրիութիւնը գերադասելու»:

Հիմալ երկրորդ նպատակի մ'առջեւ կը դրանուինք ընկելով սա գիտնալ թէ՛ կուսակրօնութիւնը կատարելութեան հասնելու պայմաններէն եւ ժամանակին «Պապերու եւ ժողովներու միջոցաւ» այս խոհորդն վրայ տրուած «ճորձմանց յիշարաններէն մին կը կազմէ եղբր: Գէթ մեք այնպէս կը հասկնանք «քարձեալ կը հրահրէ» բառերէն: Այդ կատարելութիւն անուղղանկարութիւն կ'ենթադրէ՝ կրօնապէս խօսելով: Ասկէ զատ Պապին քիչ առաջ ըրած թոյլտուութիւնը հոս յայտնովին ստորնգրական կերպարանք մը կ'առնէ: Նա՛ ճշմարտութեան վերադառնալէ հետո՛ւ՝ ձախ ձեռքով կ'առնէ, ինչ որ ալ ձեռքով կուսայ: Կարծես թէ այդ շրջաբերականը երկու աղբիւրէ կը բղխի: Անոնցմէ մին՝ Հոռովակական եկեղեցւոյ քահանայապետը ճշմարտաւէր Լեւոն ՓՊ. կ'ըսէ՝ ամենայն պարզութեամբ:

—Ամուսնացէ՛ք եթէ կուզէք, քանի որ Աստուած ամուսնութիւնը մեզք չ'սեպեր»:

—Բայց, կը յանելու ինչոյն Պապը. —Երկրորդ աղբիւրը — գիտցած ըլլաք որ ամուսնանալով կատարելութեան շուղէն կը հեռանաք...»:

Եւ զ՞՞ է այն եկեղեցականը որ հաւանի պաշտօնապէս անկատար երեւի իր ծուխերուն աչքին: Յայտնի է ուրեմն որ Պապը «ամուսնացէ՛ք» ըսելով «մի՛ ամուսնանաք» կը հասկնայ: Միշտ անաշին դարերու քննարկս եւ բարեկարգիչ ոգին է որ կը փօսի:

Սա ալ կ'ուզէինք գիտնալ որ, եթէ այդ Հարաւ-Ամերիկայի ամուսնացեալ կղերը Հիւսիս-Ամերիկա կամ այլուր ճամբորդեն, իրենց կիները հետեւին պիտի առնեն, թէ ո՛չ. Հարկ չ'կայ ըսելու որ եթէ միտին ճամբորդեն, քար գայթակղութեան պիտի ըլլան ուրիշ երկիրներու եկեղեցականաց: Իսկ եթէ միայն ճամբորդեն, արդեօք՝ այն ժամանակամիջոցին մէջ՝ զոր պիտի անցնեն իրենց կողակցին հետո՛ւ՝ պիտի կրնան վերստին ճիշտ կատարելութեան շուղին մէջ, զոր դարձեալ պիտի ձգեն՝ երբ այր եւ կին միանան:

Ո՞րպիսի բարեկրօնեան խառնակութիւն ամուսնապարզ եւ ամենայնպէս կրօնքի մը մէջ:

Բայց ի՞նչ է այդ կատարելութիւնը որ իբր խրատեցալ կը դրուի ամուսնապարզ հակամէտ կղերին առջեւ:

Այն մարդոց համար, որոնք իրենք զիրենք պաշտօնեայ կը յորջորջեն էակի մը որ կը դազապարտէ նոյն իսկ անպատեհ մտածում մը, անտեղի հայեացք մը, բառ մը, այնքան անկարելի է կատարելութեան հասնիլ ամուրի մնալով, որքան անկարելի է ուղտի մը՝ ասեղին ծակէն անցնիլը. Քրիստոսի խօսքով: Ո՞վ է այն մենաշնորհեալ անձը, որ գէթ մի անգամ մեղանկար ըլլալ այս կամ այն կերպով: Եւ եթէ կատարելութիւնը, այսինքն անմեղանկարութիւնը կարելի է մարդոց համար, ուրեմն Քրիստոսի մարմնանալը աւելորդ քան մը եղաւ:

Իսկ եթէ կուսակրօնութիւնը սրտի մաքրութիւն հասցուած է, դա մեծ սխալ է: Կարգացէ՛ք մեր ողբերգու նարեկացիք! Ընկալ քաղցրութեամբը, եւ տեսէ՛ք կուսակրօնի մը խղճի տագնապը:

Եթէ նախադարեան «ժողովներու» մարնակցողները, իրենց նորահաւատի խանգով չ'էին կանխատեսած, կամ արհամարհելի համարած էին այն հոմբրակնս պայքարը, զոր ստուգապէս յազմուելու պայմանաւ կուսակրօնութիւնը պիտի մղէր ընտելեան դէմ, արդի Պապը իր քրտաթիւթիւնով կամ պատմութիւնն ուսումնասիրելով հասկցած ըլլալ կ'երեւի իր «որչափ հնար է ամուրիութիւնը դիրադասելու» յորջորդանքը:

Յորդորակ անխմտութեամբ կ'ընդունի որ իր նեղկայացուցիչները քարձեալմանց պիտի նկատուին, եւ կը յորջորջէ զանոնք համբերելու միջոց եւ ճարտաստին. լաւ է բայց ամենապիտան միջոց եւ ամենավերին աստիճանը տանող ժամանակամիջոցին մէջ անոնց հոգին, միտքը, սիրտը ո՞ր տեսակ կատարելութեան մէջ պիտի գտնուին, եւ իրենք ի՞նչ այլազան մաքրութեամբ պիտի սպասաւորեն եկեղեցւոյ մէջ: Սորո՛ւրդ անխմտութիւն:

Բայց եթէ «կատարելութիւն» բառով քրիստոնէական պարտականութեան մէջ յառաջդիմութիւն հասկնանք, ուրիշք արդէն անոր Աստուածատուր աստիճանաչափը, որ է՝ ճանաչարանային, եւ որուն մէջ բառ մը չ'ենք գտնելի նպատակուսակրօնութեան դատին:

Այսպէս մարդկային զոյգ ծնունդ եւ մինքն քան զմեզն աշխարհակ եւ անհեթեթ վճիռ եւ որոշումներու մէջ ի՞նչ կ'ըլլայ կիներ, այն էակը՝ զոր Աստուած մարդուն տուաւ իբր «օգնական», զոր առաջին մարդը կը յորջորջէ «մարմին ի մարմնոյ իմմէ, ոսկր յոսկրաց իմոց» ցուցնելով թէ կիներ՝ առն ամբողջապապի մի մասն է: Սխալ գիւրիւն է պատասխանել այդ հարցումին:

Երբ միանգամ որոշուեցաւ ի՞նչ ամուրիութիւնը կատարելութեան հասնելու միջոց մ'է, յայտնի է որ յաւելու անկատար մեղքի միակեղանակն եղաւ ամուսնութիւնը: Ուրեմն կիներ խոհորդոտ մ'է արքայութեան ճամբուն վրայ: Երբ եկեղեցւոյ պետերը ամուրիութիւնը նուիրագործեցին, բնականաբար ժողովուրդը չ'էր կրնար այնպէս տրամաբանել կիսը վրայ: Ուրիշ բացատրութիւն կարելի է սալ կնոջ դարերով լքեալ վիճակին,

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ն. Վ. Բարձր. Խախիճ Մարա ամուսնային կամ շինարարության օրը Գահիրե պետի ժամանակ: Նորին Բարձրութիւն, ինչպէս տեղական թերթերը կը ծանուցանեն, անցեալ շաբաթ օր Մալթոս հասած և կիրակի օրն ալ հոն անցուցած է:

— Գերմանական ընդհանուր հիւպատոսը Պ. Վոն Միլլէր, Սուտանի անտեսական կայտնիները, երկաթուղոյ գծին և ճարտարագործական աշխատութեանց սկզբնաւորութեանը մասին իւր կառավարութեան տեղեկագիր մը ուղղած է:

ԻՊՏԻՆԵՐՈՒ ՊԱՏՐԻԱՐԿԸ. — Մտադիր է Հոռով Պապին իրենց վանքին նուիրած 500,000 ֆրանքով կալուած մը գնել:

ՆՈՐ ՀԻՒՆՆԻՍՆՈՅ. — Մինչէի նոր հիւանդանոցին շինութիւնն աւարտած է:

ՆԵՂՈՍ ԳԵՏԸ. — Այս տարի Վատի Հալֆայի մէջ ամուսնային 18ին 1,34 և 19ին 1,33 մէթր բարձրութիւններն են, մինչդեռ անցեալ տարի փետր. 18ին 1,10 և 19ին 1,08 մէթր էր. ըսել է այս տարի Նեղոսի ջրերը համեմատաբար նուազ պիտի ըլլան:

ՃԱՇԿԵՐՈՅԹ. — Ազգ. քանդակարտ Ռուսական հիւպատոսն փառաւոր ճաշկերոյթ մը տուեր է տեղւոյն կառավարիչ Մահմադ փաշայի: Միևնոյն երեկոյին Ս. կատարին է կաճառին մէջ շքեղ նուագածութիւն մը տեղի ունեցեր է, ուր նորին վսեմութիւնը շնորհակալեաց ուղերձ մը մատուցեր է Պ. Կ. Գալուլիի, որ աղքատաց բաշխուելու համար 5000 դահեկան նուիրած էր:

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՍՅՈՒՄ. — Խըտիվական թատրոնի մէջ վաղը կիրակի 23 փետր. ի նպատակ յունական Աղքատներին մը ընկերութեան շքեղ ներկայացում մը պիտի տրուի:

ԼՈՒՍԱՎԱՌՈՒԹԻՒՆ. — Կազմ ընկերութիւնը հրաման ստացած է երկրորդական լոյսով քաղաքի քանի մը փողոցներն ալ լուսաւորելու:

ԻՇԽԱՆ ՄԷՅԾ ԷՏՏԻՆ. — Ներքին գործոց նախարարութիւնը Աճէտ փաշային արտօնութիւն տուած է, որ ամէն ուրբաթ օր, ի կիզէ բանտարկեալ իւր քեռորդոյն այցելութիւն տայ:

ՏԱՐՈՐԻՆԱԿ ՓՈԹՈՐԻԿ. — Անցեալ ուրբաթ գիշեր սաստիկ ալեկոծում և տարօրինակ փոթորիկ մը տեղի ունեցած է, այնպէս որ Սուաքիմի և Քասալայի միջև եղած հեռագրական յարաբերութիւններն դադարած են մինչև շաբաթ գիշեր:

ԲՈՐ - ՍԱՅԻՏ. — Նմանօրինակ փոթորիկ մը տեղի ունեցած է, և 16 առագաստանաւեր փոթորկի բռնուելով, անոնցմէ շատերը կատաղի ալեաց զոհ գացած են և կը կարծուի թէ՛ միայն չորս հատը պատահած ըլլան: 14 ճամբորդներէ 3 հոգի միայն ազատած են և ընկղմեալներու յէջէն քառասուն հոգի առանց ընտանիքի են:

Բօր-Սալիտի կուսակալը հանգանակութիւն մը բացած է այս աղետալի գէպքին զոհ գացողներուն ընտանեաց օգնելու համար:

— Ղազի Մուխթար փաշայի տարեկան երեք հազար յոյսերը պիտի տրուին յառաջիկայ ամսոյ սկիզբները: Առաջին ճաշին

— որ պիտի տրուի Մարտի առաջին շաբաթուն — պիտի հրատարակուի Գիւանագիտական մարմինը. իսկ միւս երկու հազար յոյսերուն պիտի հրատարակուի նախարարութեան նախարարաց խորհրդականք. բարձր պաշտօնատարք, ինչպէս նաև երկրագործի և անշաքի երեկոյի:

— Յառաջիկայ ամսոյ մէջ ի Բոր-Սալիտ, հիւանդանոց փաշայ Վազի շքեղ պարահանագէտ մը պիտի տայ:

— Ն. Բ. Խախիճ վերջերս երկրորդ կարգի Օսմանիէի պատուանշան մը շնորհեց Ռիսիէյի փաշայի: Վերջերս թագուհին կը թողարկէ փաշային այդ պատուանշանին գործածութիւնը:

### Հ Ե Ռ Ա Գ Ի Ր

ԲԱՐԻՉ, 16 Փետրվար  
Սրբ Էտմընտ Մոնտըն հոս վերադարձաւ:  
ԲԷՆՍՊՈՒՐԻ, 16 Փետրվար

Անգլիական զորագնդեր ստուար ուժերու առաջ տեղի տալով թողուցին Բէնսպուրկը, զոր Պօէրք գրաւեցին:

ԼՈՆՏՈՆ, 17 Փետրվար  
Չորսվար Գոթմ և տան հազար Պօէրք գէպ ի Պրոմթոնթէյն քաղաքացան:

Չորսվար Քէյլի Բէնի սկսաւ զանոնք հարուածել:

ԳԱՆ, 17 Փետրվար  
Պօէրք կը փորձեն ի Կրքսարան Հորոմ Բոպըրքսի հազարակցութիւնները խզել:

ԼՈՆՏՈՆ, 19 Փետրվար  
Չորսվար Պուլլըր Պզէրները Թիւթէլայէն վանեց և շատ մը բանակաւորներ գրաւեց:

ԳԵՆՈՒՆ, 19 Փետրվար  
Չորսվար Բոպըրքսի Մօտարի հիւանդանոցին կողմի շարժումները կասեցան: Հեղեղանման անձրևներուն հետեանօք ճամբաները հրետանիին համար անանցանելի դարեցած են: մարտիկ և ձիերը ուժաթափ եղած են: Պօէրք Պրոմթոնթէյնի ճամբուն վերայ լաւ մը ամրացած են:

ԼՈՆՏՈՆ, 20 Փետրվար  
Չորսվար Պուլլըր կը հեռագրէ թէ՛ քրաւեց Գոթմոն զոր Պօէրք պարպած էին: կ'երևի թէ այլ վերջինք գէպ ի Թիւթէլայի հիւանդանոցին կողմը կը քաշուին:

ԱՐԷՕՆՏԵՆ, 20 Փետրվար  
Կը կարծուի թէ Բէնսպուրկի գոմնուող տան հազար Պօէրք Օրանտ վերադարձեցած են, իրենց հոգին վերայ լինելիք արշաւանքին դիմադրելու համար:

ԼՈՆՏՈՆ, 22 Փետրվար  
«Փայլոյ» 21 Փետրվար թուականու կ'իմանայ թէ՛ Պօէրք 20ին Գոթմոնի և Բաարգպէրկի հիւանդանոցին կողմը ամրացած են, թէ՛ Քէյլի Բէնիի զօրաբաժինը կիրակի և երկուշաբթի օրերը յարձակում մը ըրած է Մօտարի հիւանդանոցին ամրացող վրայ գրանուող զօրավար Գոթմի բանակին վրայ: Երկու կողմանէ մեծ թուով կորուստ կայ:

Չորսվար Գոթմ և իր քաղաքի զինադադար մը խնդրել է երկր:

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐԻՒՄ. — Ֆրանսայի, Անգլիոյ և Ռուսիոյ դեսպանատուներ Գրան բողոքագիր մը ուղղած են Մէքսիկոյ անշախահաս մանկամարդ աղջկան բռնի հաւատախախտութեանը գէպ: Իբր թէ թուրք իշխանութեան կողմանէ բացուած քննութիւնը հաստատուի

հանգէպ քրիստոնէութեան պէս ազատարար կրօնքի մը, որուն առաջին պատուէրն է սիրել զմիմեանս, և պիղծ չսեպեր ինչ որ Աստուած սրբած է: Իրդ առաջին ամուսնութիւնը կատարուեցաւ ձեռքով նոյն իսկ այն Արարչին, որ « սուրբ եղիք, վան զի ես սուրբ եմ » ըսաւ, և որ ընտանիքը հաստատուեց իր « անցէք և բազմացարուք » վճիռով:

Ուրեմն ամուսնութիւնը չկրնար արգելափակել ըլլալ սրբութեան, և սրբութեան մէջ միայն կը կայանայ այն կատարելութիւնը, որուն կը բազմանք հասնելու թերեւս մի քանի ասանձնաշնորհեալ անձինք գերբնական զօրութեամբ մը բնութեան յաղթած և այս կերպով սրբացած են, բայց և այնպէս չ'ենք կրնար նոյն սրբակրօնութեան և ամուսնութեան վիճակին չ'երազրել այն բազմապիսեակ աղէտները, որոնք դարերով երկիրս սղոզել է սուրբ գոյութիւն տւնին մինչև այսօր:

Առ այժմ կը վերջացնուի սոյն տեսութիւնը, փոքր քաղուած մը ընելով՝ կեանքը ամեն կերպով ուսումնասիրած կարող անձնաւորութեան մը, ամենայն Հայոց Կաթողիկոս Սրբաբնակ Հայրիկի « Գրախոսի Ընտանիք » իրաւամբ դրախտարոյր երկապիտութեանէն:

« Նուաւստ, անասնաբարոյ և ամբարիշտ են այդ մոլորամիտ մարդիկ, որ . . . ամուսնութեան, հայրութեան, մայրութեան և ընտանեկան իրաւունքները ջնջել բառնալ կ'ուզեն մարդկային ընկերութեանէն »:

« Ամուսնական սէրն ա գին է, սնուիւտ է, և քան զմահ զօրաւոր է. իւր կոչումը սուրբ և խորհրդական է, նորա պատկերը պարզ և մաքուր է: »

Գահիրէ, 15 փետրվ. 1900

### ԵՒՐՈՊԱԿԱՆ ԹՂԹԱՔԵՐ

ԹՈՒՐԻՒՄ ՊԱՏՈՒԹԻՒՆԻՆԻՍՏԻՆԻՆ ԻՐ Ի ԲԱՐԻՉ

Երէկ առտու Բարիզ հասան ձեզվատ պէյ, Ապտիլլահ փաշա, Թէվֆիք պէյ սրնք Սուլթանին կողմանէ զրկուած են Բարիզ նրանսական հասարակապետութեան նախագահ Պ. Լուպէի մատուցանելու նշանը ինքիւր շքանշանը: Կայարանին մէջ իրենց կապասէին Թուրքիոյ դեսպան Միւնիթ-Պէյը, դեսպանատան մէկ քանի անձնաւորութիւններով միասին, Պ. Տէլքասէի ներկայացուցիչն, և կայարանի պետն:

Նորեկներն նախ Թուրքիոյ դեսպանատունը գնացին և անկէ մեկնեցան Կրանտ Օթէլ ուր իրենց համար մասնաւոր բնակարան պատրաստուած է:

Ժամը երկուքին Սուլթանի առաքեալները Արտաքին Գործոց Մինիստրին Պ. Տէլքասէի ներկայացուցեցան Միւնիթ-Պէյի միջոցով, տեսակցութիւնը միայն քանի մը վայրկեան տևեց: Շքանշանը Պ. Լուպէի պիտի մատուցուին վաղը՝ մծա ժամը 11ին. արարողութեանէն յետոյ նախաճաշ մը տեղի պիտի ունենայ:

A. S. ԵՒ Մ. Ս. ԴԱԻԹ ԲԷԿ

### ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԱՄ 23 ՓԵՏՐՈՒՄ 1900

6163	3255	3351	816	8793	1727
4320	9366	788	4770	483	1490
8751	2756	7908	9245	722	4178
2331	4796	4652	9455	8341	4195
	9913	4085	3443		

է որ՝ աղջիկը իւր կամօքը տունը թողուցեր է իսրումական կրօնը ընդգրկելու փափաքով :

Միւս կողմանէ կ'ըզուի թէ՛ իսրումական դարձած անչափահաս Պուլիպոյ մը, ուզելով իւր ծնողացը քովը դառնալ — սրբ կը գտնուին Պուլիպոյական գործակատարին պաշտպանութեանը ներքեւ — նորէն բռնի բռնուած և ոստիկանութեան քով պահուած է :

— Փրանկական դեսպանատան կըզմանէ եղած ազդարարութեան վրայ, Գուռը իզատացաւ պարտելէ այն ոստիկանները, որք վերջերս Պոլսոյ նաւահանգիստին մէջ Փաղիական նաւաձիգ շոգեխաւի մը վրայ խուզարկութիւն կատարած էին : Ինչպանատունը այժմ կ'սպասէ որ Գուռը իւր խոստումը կատարէ :

— «Կազէթ տը Փրանքֆորտի Պոլսոյ թըղթակիցը կ'ըսէ թէ՛ Բարիդի Օսմանեան դեսպանին մէկ գրգռութեանը նայելով, Սուլթանին քննաչորը, Մահմուտ բաշա և իւր երկու որդիքը հաւաներ են անպայման կերպիւ Պոլսոյ վերադառնալու : Այս արդիւնքը ձեռք բերուելու է շորհիւ Փրանսայի հանրապետութեան նախագահ Պ. Լուպէի միջնորդութեանը :

ՔՐՈՆՍՎԱԼ. — Պօէր կանայք. — «Լիվրուլ Բօսթը կ'ըսէ թէ՛ թրանսվալ իր տեսակին մէջ եզակի տեսարան մը կը պատրաստէ Եւրոպայի, և կը յաւելու. «Երէկ զրոյց մը կը չըլէր — և որ կը հաւատամ թէ շատ հիմնաւոր է — որուն նայելով՝ Պօէր կ'ինքնէ միահամուռ զօրածուք մը պիտի լինի, այս կանայք կ'ուզեն որ իրենց ամուսիններուն հետ քովէ քով պատերազմին : Կ'ըսուի թէ նախագահ Քրիկէր խիստ դժուարութիւն կրեր է այս «մարտկուհիները զսպելու համար, բայց թէ ինք և թէ՛ զօրջվար ժուպէր իրենց խոտոացեր են սր պիտի թողարտեն զիրենք զէնքի դիմելու, եթէ Անգլիացիք յաջողին հանրապետութեանց հողին վրայ ոտք կոխել :

— «Տէյլը Նիւզ» կ'ըսէ թէ՛ թրանսվալէ եկող Անգլիացի մը 80,000է աւելի կը կարծէ Պօէր պատերազմիկներուն թիւը : 25,000 հոգի Քիմպըրլի և Սթալթֆոնթէյնի մէջ ամփոփուած կայ. 25,000 հոգի ալ Գրէսպէրլի և Սթորմպէրլի մէջ : Լէնկ'ս Նէք, Մանուպա Հիլ և Վան տինէնի անցքը աւելի զօրացուած են և գրեթէ անառիկ է : Պօէրք առատ պաշար ունին :

— «Նիւ Փրի Բրէս» կը պատմէ թէ՛ տարիի մը չափ առաջ թրանսվալի կառավարութիւնը 3000 օրինակ հարաւային Ափրիկէի քարտէսը ապսպրանք տուաւ Ուինթըրթրի Զուիցերիացի հրատարակչի մը : Երբ պատերազմը ձագեցաւ քարտէսները գեռ պատրաստ չէին : Անգլիական կառավարութիւնը ասիկայ իմացաւ և շահաց քարտէսները գնել Անգլ. բանակին սպաներուն համար : Հրատարակչը մերժեց և յայտարարեց որ ապսպրանք իւր տիրոջը միայն կը յանձնէ, նամանաւանդ որ թրանսվալի կառավարութիւնը դրամատան մը մէջ գրած է քարտէսներուն փոխարժէքը՝ ապսպրանք տրուած օրին իսկ գնովը : Վերջապէս, վերջերս երկու Պօէր ներկայացուցիչներ Ուինթըրթրը եկան և ապսպրանքը ստացան :

— 8 Փետրվարի Երեսօրիսանաց նիստին մէջ, Պատերազմական գործոց նախարարութեան խորհրդական Պ. Ուինտհամ յայտարարած է թէ՛ Հարաւային Ափրիկէ գրանուող արգի անգլիական ուժերուն ճշգրիտ թիւը 179 հազար հոգիի կը հասնի :

ԳԵՐՄԱՆԻԱ. — Բրուսելոյ Հանրի իշխանը — որ երկու տարիէ ի վեր բացակայ էր — իւր Պէռլին ժամանմանը մեծ պատուով ընդունուեցաւ Կիյոմ կայսեր կողմէ : Պէռլինի վարժարանաց ուսանողներուն արձակուրդ տրուեցաւ և տուները գրոջակներով զարդարուած էին : Պայարանէն գզեակը առաջնորդող փողոցները խուռն բազմութիւն մը գրաւած էր : Բնակիւնաւար կայսեր համար խիստ հաճոյալի բան մ'էր իւր եղբոր եղած այս ընդունելութիւնը, եղբայրը՝ որ նաւատորմը կը ներկայացնէ : Բարձրատիճան անձնաւորութեանց մէջ, որք եկած էին Հանրի իշխանը գիմուորելու, կը նշմարուէր արքայական ընտանիքին իշխանազունք, զօրականք և Բրուսական նախարարութեան անդամք՝ իրենց գլուխը տնկնալով Հօհենլօէ Իշխանը : Երբ հանրի իշխանը, որ ծովակալի համագգետ կը կրէր, երկաթուղւոյ կառքէն վար իջաւ, կայսրը և ինք զիրար բազմիցս գրկախառնեցին : Բաց կառքով զղեակ դարձան. կառքին մէջ իշխանը կայսեր քովը նստած էր, պալատան մէջ Հանրի իշխանին ի պատիւ տրուած ճաշի միջոցին՝ կայսրը բաժակաճառ մը արտասանեց :

ԱՆԳՂԻԱ. — Ստանս Հավաս կ'ըսէ թէ՛ Վիքթորիա Թագուհին Մարտ 9ին Ուինտսօրը պիտի թողու և Սաութհէմթընէ նաւ պիտի նստի Շերպուրկ անցնելու համար : Ըսել է թագուհին Փրանսայէ պիտի անցնի

Պորտիկէրա երթալու համար, որ կը գրտնուի Իտալիոյ մէջ :

— Լուր տարածուած է թէ՛ Լոնտոնի Արեւելեան մասին թաղերուն մէջ ժանտախտի գէպքեր պատահած են : Այս տարածաչնութեան հետեանօք այս օրերս Անգլիական մայրաքաղաքին մէջ մեծ յուզում մը կը տիրէ : Միւս կողմանէ տրուաւոց գէպք մը կը նշմարուի. մի քանի ամիսէ ի վեր ի Սաութհէմթըն շուներուն մէջ համաճարակ մը կը տիրէ, ուսկից մեռան քաղաքին բոլոր շուները :

Կ'երեկ թէ այս համաճարակը Անգլիոյ շատ մը կէտերուն վրայ յամբարար այլ առանց կասելու տարածուած է. Լոնտոն ալ չի խնայուեցաւ. մայրաքաղաքին անասնաբուժները այժմ մեծ իրաջպնցումի մէջ են :

ԿՐԷՏԷ. — Ասիոյ լրագրին Գանէի թըղթակիցը կ'իմանայ թէ՛ Սուլթանը յայտարարել է որ յօժարութիւն պիտի ցուցնէ ժողով իշխանը ինքնօրէն կրէակէ իբրև կառավարիչ ճանչնալու, եթէ Պոլսոյ գայ և իրեն մատուցանէ իւր յարգանքները իբրև գերիշխան Վեհապետինց ժողով իշխանը երբ ուզեր են իմանալ իւր կարծիքը, ըսել է եղբր որ եռամեայ պաշտօնավարութիւնը մինչև որ չի լրանայ և ոչ մէկ բանի չի կրնար ձեռնարկել, միայն ի՛նչ եթէ կրէտէի գործակից կառավարութիւնը ուզեն այժմէն իւր պաշտօնը տեւական ընել, այն ատեն խնդիրը կը փոխուի :

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ. — « Թէ հրանէ ծանր լուր մը կը հասնի, այդ լուրին նայելով՝ Ռուսա Պարսկական սահմանագլխին մտերը՝ Քիւր տիստանի մէջ՝ յեզափոխութիւն մը ծագեր է : Քիւրտերը զէն ի ձեռին նոյն իրենց անկախութիւնը կը պահանջեն թէ՛ հրանի կառավարութեանէն : Ոչ ոք պիտի զարմանայ եթէ Ռուսիա տեղւոյն վերայ զօրքեր զրկէ, իւր սահմանագլխինը պաշտպանելու համար :

Շահը, այս յեզափոխութիւնը լսելու համար, զրկեր է խիստ զօրավար մը, Սէմիտ Խան, որ կ'էքիլի թէ գործը աւելի վառութարացուցեր է : Թէպէտ այնպէս պիտի երեկ որ այս խռովութիւնը անգլիացիներու կողմէ գաղտնի արժարժուած է. բայց հազիւ հաւանական կը լուր որ Անգլիա, Պօէրնուրուն հետ այնքան զբաղեալ, ուզէ իւր Հնդկաստանի սահմանագլխները վտանգի ենթարկել :

Թալիզ Ասիոյ գործոցը մասին խօսելով կ'ըսէ.

# ԼԱ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՅ

## ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՃԽԱՐՀԻ ԱՄԵՆԵՆ ՀԱՐՈՒՄՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ

ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԻԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրիւններուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները :  
Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԻԱՐ 480 ՄԻԼԻՈՆ որ գրեթէ այնպահի ուրիշ որ և է ընկերութեան մէկ միլիար աւելի է :  
Ս. ԼԷՈՒԱՐ ընդհանուր ձեռկայացուցիչ ի Դահիլէ :

Աշխարհի մէջ գանուող ուրիշ որ և է ընկերութեան աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրին կը գանձէ :  
ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ զլրաւոր գործ. յԱզգ. քսանգրիւն :

Ռուսական քաղաքականութեան Ասիոյ մէջ վերջերս ստացած ծաւալումը պէտք է որ զմեզ չափազանց թունդ հանէ, այլ պէտք է որ այս ծաւալման առևտրական և քաղաքական հետեանքները խնամով ուսումնասիրուին: Արդէն կը կանխատեսուեր թէ՛ Ռուսիա ուշ կամ կանաչի գերակշիռ տարր մը պիտի լինէր Պարսկաստանի հիւսիսային մասին մէջ, և գոհունակութեամբ կը նշանակենք հոս՝ ուր Մոսկուայի կառավարութիւնը Պարսկաստանի հարաւային մասին վերայ ու է համարառութեան և կեցած է, ուր անգլիական շահերը աւելի մեծ են:»

Այսու հանդերձ թւայնկ ցաւ կը յայտնէ որ Ռուսիա Անգլիոյ խառնափնթորութիւններէն կ'օգտուի Պարսկական խնդիրը կարգադրելու համար, առանց այդ մասին Լոնտոնի դահլիճին տեղեկագրելու:

Յետոյ կը յաւելու թէ՛ Գերմանիոյ կ'աշխատին Ասիական այս խնդրոյն վերայ Անգլիան և Ռուսիան իրարու հետ գծանցներու բայց, կ'ըսէ, Պ. Տը Պիւլով Պիլմարքը չէ՛: Մերունի նախարարապետը գիտէր իրեն պահել իւր գիւտնագիտական ուղղման տուրքեան գաղտնիքները:

Հնդկաստան — Մորնինկ Բուդի Պեմպէյի թղթակիցը կ'ըսէ թէ՛ տղը զարհուրիչ կերպով աւելնալու վրայ է. չորս միլիոնէ աւելի անձինք նպատակ դրամով կ'ապրին: Տէքքանի արեւելեան մասին, ինչպէս նաև ուրիշ շատ մը նահանգացի մէջ ժողովուրդը բոլորովին վիճատած է: Անուաղու թեանէ ստեպ մահեր կը պատահին, ի մասնաւորի Բաճրուգանի մէջ:


ՆՈՐ ԹԱՏՐՈՆ ԵԳԻՊՏԱԿԱՆ  
Ի Շարիա Ապտիւլ-Ազիզ  
28 Փետր. 1900 Չորեքշաբթի գիշեր ժամը ճիշդ 9ին  
ՀԱՅ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԽՈՒՄԲ  
Մեծաւ պատրաստութեամբ կերկայանալի  
**Պ Ա Տ Ե Ր Ա Ձ Մ**  
ԸՆԴԴԷՄ ՊԱՐՍԻՑ

ՔԱԶԻՆ ՎԱՐԴԱՆԱՅ ՄԱՄԻԿՈՆԷԻ  
Սրգախառն ողբերգութիւն 5 արար եւ 6 պատկեր  
գրեց ՍՄԲԱՏ ԲԻԻՐԱՏ  
ԱՆՁԻՆ Գ

ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԷՆ . Պր. Պ. Շաւարշ  
ՂԵՒՈՆԻ ԵՐԷՑ . . . . . »  
ՔԱԶԻՆՍ ԱՐԲԱՅ ՊԱՐՍԻՑ . . . . . » Բ. Սիրունեան  
ՅՈՎԱԷՓ ԿԱՔՈՂԻԿՈՍ . . . . . » Վ. Բալուեան  
ՎԱՍՍԿ ՍԻՒՆԻ . . . . . » Ե. Պէլեան  
ՆԵՐՇԱՊՈՒՆ ԱՐՄԲՈՒՆԻ . . . . . » Մելքիսեղեկ  
ԴԵՆՊԵՏ Ի ՏԻՉՐՈՆ . . . . . » Նաչիտ  
ՎԱՀՐԱՄ ՎՐԴԵՆՅԱՆ ԶԻՆԱԿԻՐԸ . . . . . » Ղազարեան  
ՉԱՆԳԱԿ ԵՐԷՑ . . . . . » Պր. Վրայր  
ՄԻՆԴՐԱՆՍԻՆ ԿՅՈՒՄ . . . . . » Տէրմաթեան  
ՍՍՀԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ . . . . . » Միսաքեան  
ՄՈՎԿԱՆ ՄՈՂՊԵՏ . . . . . » Իււղանդ  
ՍՄԲԱՏ . . . . . » Գարագաշ  
Նախարարք, զօրք, քուրմք, կզիսկոպոսք, քահանայք, ծառայք եւ այլն:

Տոմսակները կը ծախուին Տիար Երզնկացեանի քով Ի Շարիա Ապտիւլ-Ազիզ:  
Պ. Պաքալէի առաջնորդութեամբ 12 հոգիէ բաղկացեալ եւրոպական խումբ մը միջնարարներուն ընտիրը կտարներ պիտի նուագէ:

Վ Ա Ճ Ա Ռ Ա Տ Ո Ւ Ն Թ Է Յ Ի  
Գ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՆԿ  
ՇԱՐԻ-ԱՊՏԻՒՆ-Ա.ՉԻՉ



Թէյի գործածութեան ընդհանրանալով, թէյի ճաշակն ևս նըբացած է. որով թէյի առևտուրն վաճառականութիւնէ աւելի արուեստ մըն է որ միայն երկարատեւ և ճոխ առևտուրէ յառաջ եկած փորձառութեամբ կ'ստացուի:

Մեր տունն, որ արդէն հանրածանօթ է իր քսանամայ գոյութեամբ և ընդարձակ գործառնութեամբ, այս տարի ևս իր մասնաւոր գործակալաց ձեռամբ գնած է բազմազան և մեծաքանակ ընտիր թէյեր ԶԻՆԱՍՏԱՆԻ, ՃԱՎԱՅԻ, ՄԷՅԻԱՆԻ և ՀՆԴԿԱՍՏԱՆԻ գլխաւոր արտադրիչներէն, որոցմէ արդէն հասած է մեզ. ինչպէս նաև ձեռուաւն եզանակի յարմար թէյեր, որոնք իրենց գերնտիր հոտաւէտութեամբ ամեն ճաշակի յարմար ըլլալով հանդերձ, գներու ՉՊՓԱՉԱՆՑ ածանութեամբ ալ ամեն քսակի դիրամատելի են:

Թէ կ. Պոլսոյ և գաւառաց, և թէ անոնք երկիրներու մէջ մեր տան ցոյց արուած մտահոլութիւնն կը քաջալերէ մեզ, առաւել ևս յարիւ մեր սկզբունքին, որ է՝

Ուղղամտութիւն Թէյերու ճեպակի, կօխի և զնոց մասին:

Մեծաքանակ թէ փոքրաքանակ մեզի եղած կ'ԱՆԻԿ դրամով յանձնարարութիւնք փութով կը կատարուին:

19 — 50

ՏՅՈՒՊՈՐ ԺՕՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ  
Ամերիկեան Առանձնաբայ  
Ապրիլ Շարի Գուպի Թիւ 55

Կը կատարաստէ ամեն բերաններու և հասակի յարմար ընտիր ապրանքներով կեզծակուաներ:

Կը դադարեցնէ վայրկենապէս ակուայի ցաւերը, ամերիկեան նորագոյն մեթօտով իւր պատրաստած զեղերով:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած ակուաներուն սոկուսութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաջխաւորէ:

Վկայեալ աղքատներու ձրի դարմանում, ամէն օր կէսօրէ ետք ժամը 3—5:

Քաղաքուրիւն Ա. Ա. ԴԱՐԿԻՆԵԱՆ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՓՈՒՈ  
ԵԿԱՒՕՑ ԵՒ ԸՆԿ

Ոո օգի Պաք վաճառատնէ մօտերի, Կաւե-Է-Պէնաքի ցիքս դիմացը

ԵԿԱՒՕՑ ԵՒ ԸՆԿ. բազմաթիւ նորանոր յանախորդներէ գտած ընդունելութիւններէն քաջալերուած, պատիւ ոնին յայնձնարարելու թէ՛ իրենց փոխին մէջ պատրաստուած ընտիր հացերը զուտ և անխարդախ ալիւրէ պիտի ըլլան միշտ:

ԵԿԱՒՕՑ ԵՒ ԸՆԿ. թեան փուռին մէջ գաղղիական, անգղիական, գերմանական և յունական հացեր պիտի պատրաստուին, իրենց տեսակին մէջ անմրցելի ըլլալու պայմանաւ:

ԵԿԱՒՕՑ ԵՒ ԸՆԿ. ամենամեծ խնամքով պիտի պատրաստեն սուրճի, թէյի և կաթի պարսիմանները և այլն:

ԵԿԱՒՕՑ ԵՒ ԸՆԿ. թեան եղած յանձնարարութիւնք ամենայն ճշգրտութեամբ և փութով կը կատարուին:

32—50

ԿՈՊԷՌ ՊԷՆԼԵԱՆ  
ՆՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱՏՈՒՆ ԵՒ ՆԿԱՐՉԱՏՈՒՆ

Տասերկու տարինց շարունակ կարեւոր ըլլաւ անկարգատուններու մէջ աշխատելով, արհեստին ամեն ճիւղերը լաւ ճակած և փորձառութիւն ստացած է:

Պոլսոյ մէջ մկաթուլահ եղարաց տան ինչպէս և ուրիշ մի քանի ծանօթ տուններու քաղաքի մէջ վերջին անգամ Լէքէճեան գործապան մէջ ամենակարեւոր պաշտօնը վարած, այժմ առանձին գործատեղի մը կը հիմնէ Եզպիէի Գորիա Դամակ 0-ԹԷԼ ՇԷԷԷՐՏՍԻ ճիշդ դիմաց թիւ 3 ձորաթրմանին երրորդ յարկը. զոր կը պատրաստէ լուսանկարներ, ինչպէս և գուրք կուսկներ ի հարկին: Ակրանիսիան բնական մեծութեամբ:

Կենդանագիրներ ամերիկեան մեքենայով, որոնք երբէք չեն աւրուիր:

Գունաւոր լուսանկարներ տմեն մեծութեամբ բնական գոյներով միմեալիւ:

Իւղաներկ եւ ջրաներկ պանկներ, եւլն:

Լուսանկարի և պատկերահանութեան վերաբերեալ յանձնարարութիւններ կ'ընդունի ուրիշ, օրէջքով և ինչ:

Իրեն կիմոզ յաճախորդներն հանել տուած լուսանկարներուն հետ միեւնոյնէն գունաւոր մը նոգէր պիտի ստանան յ որ նորութիւն մ'էջ:

Դիմեցէ՛ք եւ կատարելապէս զո՞ պիտի մնաք:

ՓԱՓԿԱԿԵՐԱՑ ԱԶՔԸ ԼՈՅՍ

ԼՕՔԱՆՓԱՃԻ ՕՆՆԵԿ

Որ կ. Պոլսոյ Բերայի Հպեպ Չարսիսին մէջ ընտիր խմորեղէններ ղպատրաստելով հոչակ հանած է, այս անգամ Ապտիւրի Պահականոցին դիմացի անկիւնը խանութ բացած է և կը պատրաստէ տեսակ տեսակ համեմալ քաղցրաւէնիք, խմորեղէնք ամենամաքուր եւ ընտիր իւղով:

Հոն կիմոզ յաճախորդներէն իւրաքանչիւրը իրենց ճաշակին համեմատ գոհացում պիտի գտնեն:

Հարսանիքներու, երկկոյթներու եւ հրաւէրներու համար պէտք եղած անուշեղէն—խմորեղէնները կը պատրաստէ գոհացնելու պայմանաւ եւ գերամատչելի գներով: